

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ԿԱՐԵՆ ՊԱՊՈՅԱՆԸ ԵՂԵԼ Է ՄԱՐԶԻ
ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

22.08.2014թ.

Մարզի Ձորաղբյուր համայնքում առկա խնդիրներին տեղում ծանոթանալու, ինչպես նաև համայնքային կարևորություն ունեցող մի շարք հարցեր քննարկելու նպատակով հիշյալ համայնք է այցելել ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ Կ. Պապոյանը:

Համայնքի ղեկավար Ա. Մուքայեյանը նախ ներկայացրել է համայնքային տարբեր ոլորտներում իրականացվող գործընթացներն ու առաջիկայի մի շարք ծրագրեր, ապա անդրադարձ կատարել համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման ընթացքին:

Ձորաղբյուր համայնքում Կոտայքի մարզպետի տեղակալ Կ. Պապոյանը ծանոթացել է նաև տարբեր ներդրումային ծրագրի արդյունքում գործող <<Բիո Գրուպ>> ընկերության ջերմոցային տնտեսություն և պատասխանատուների հետ քննարկել ջերմատան գործունեությանը վերաբերող հարցեր:

Ձորաղբյուր համայնք կատարած այցելության ավարտին մարզպետի տեղակալը կարևորել է համայնքային առօրյայի աշխուժացմանը վերաբերող համապատասխան ծրագրերի մշակման ու իրագործման անհրաժեշտությունը: